



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 15-Ա

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՍԱՄՎԵԼ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ, ՍԵՐԳԵՅ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԴԱՏԱՎՈՐ ԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ԴՐՈՇՄԱԿՆԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2023 թվականի մայիսի 26-ի թիվ ՆՀ-173-Ա, թիվ ՆՀ-174-Ա, թիվ ՆՀ-175-Ա, թիվ ՆՀ-176-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Սամվել Մատինյանին, Գայանե Խաչատրյանին, Սերգեյ Սահակյանին, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավոր Գոռ Հարությունյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորին տրամադրել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի անվանմամբ «23» հերթական համարով դրոշմակնիք:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023թ. մայիսի 30
ք. Երևան